

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 007128/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 30.03.2021թ. թիվ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Անհատ ձեռնարկատեր Տիգրան Մազմանյանը (ՀՎՀՀ՝ 25303835, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ Ս. Չիլինգարյան 40) ՀՀ Հարկային օրենսգրքի 270-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Տիգրան Մազմանյանի կողմից 2020 թվականի միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է 15.02.2021 թվականին:

Արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169՝ հոդվածի 2-րդ մասով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունից վճարման ենթակա հարկի գումար չի առաջանում, ինչպես նաև վերոնշված հաշվարկը 30.03.2021թ դրությամբ արդեն իսկ ներկայացված է, ուստի վերջինիս կողմից թույլ տրված իրավախախտումը ունի նվազ նշանակություն:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244² հոդվածով, 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածի, Տիգրան Մազմանյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:

2. Տիգրան Մազմանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կառնել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

(Handwritten signature)



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտավանության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հասնելու /հանձնված համարվելու/ օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Ստացա որոշման պատճենը